ստացել է Դաւիթ բաբունը, Շմաւոնի գրչութեամբ. «Ստացող մատենիս գործական եւ արդիւնական վարդապետ Դաւիթ իւրովքն ծնողաւք եւ հարազատաւք եւ զմեղուցեալս Այ. զՇմաւոն գրիչ, այլ եւ զՎարդան, զՄխիթար, զՍարգիս» խնդրում է յիշել գրիչը։ Նոյն անունները կրկնուած են և ուրիշ փոքր յիշատակարանների մէջ (*)։

Պօղոս վարդապետ «ի մեծ մենաստանիս որ Գլաձոր յորջորջի ի դրան սբ. Նախավկայիս ի թվականութեան. հայկազենս սեռի :ՁԿԲ: ի վարժապետութեան. մերոյ մեծի Եսայեայ, յիշխանութեան. զաւառիս Պապաքին եւ Էաչո, հայրապետութեան. Կոստանտնոյ Կաթուղիկոս, թագաւորութեան. Աւշնի եւ զանութեան. Խարբանդին» գրել է բոլորգիր մի աւետարան թղթի վերայ, նկարազարդուած Կիլիկեան ոճով, որից միայն Մատթէոսի, Մարկոսի և Յովհաննու սկզբնազարդերն են մնացած (**)։



Պատկեր 206ա.

Մխիթար Երզնկացին 1314 թուին գրել է մի Պատճառաց գիրք (?) իւր վարժապետ Գրիգորիս Երզնկացու կամ Ցաղմնացու յորդորանքով. նկարագարդել է Թորոս Տարօնեցին, որի գործերին կը ծանօթանանք քիչ յետոյ. «Ես նուաստ անուն Մխիթար կոչեցեալ Երզնկայեցի. գնալով ի մայրն իմաստից Գլաձոր կոչեցեալ. առ ոտս Եսայայ վարդի. ի վարժուն ճոխմաստ գրոց. եւ յորդորիլ զիս վրան. իմ Գրիգորիս գրել զգիրքս զայս յոյժ աշխատանաւք եւ հանդիպել. բաբեմիտ և քաղցրատեսակ եղբաւր լցել. ի իմաստութիւն. եւս առաւել գրականութիւն. (ուզում է ասել գրչութեամբ) եւ ծաղկողութիւն., անուն կոչեցեալ. Թորոս ի Տարաւն գաւառէ. ծաղկազարդեաց զգիրքս զայս վս. յոյժ սիրելոյ զմեզ» (*)։ Մի ուրիշ ոտանաւոր յիշատակարանի մէջ ուշադրութեան արժանի են հետեւեալ տողերը.

«Ես Մխիթար գրիչ սորա
Թուղթս անկոկ ու գրիչ չկայ,



Պատկեր 206բ.

Աւուրքս ցուրտ ու պարզկա
Զարտախ բարձր ու կրակ չկայ,
Դոներս (հաց) չոր ու սպաս չկայ,
Եւ այս Գլաձորն ո՞վ գիտենայ.
Ես յոյժ նեղած ու ճար չկայ,
Եւ ես պանդուխտ ու վեղար չկայ»։

Մի Գրիգոր Երզնկացի ըստ № 3116 ձեռագրի Մկրտութեան խրատ ունի «Երջանիկ բաբունապետի և քաջ հռետորի մեծի Գրիգորի վարժապետի Եզընկեցոյ ի մի վայր հաւաքեալ զխրատ վս. սբ. մկրտութեան.», իսկ ըստ № 3118ի «Սահմանադրութի. դաստիարակութեան. նորածնելոց մանկանց, որք հրաւիրեալ են յաստիճան քհյուրեան., խրատք հարկաւորք եւ

(*) Conybeare. Catal. Arm. Manuscr. եր. 187։

(**) Երեւանի թանգ. № 1090 (Ցաւել. Բ. 79)։ Որոշ հիմունքներով Պապաքի մահը նշանակել ենք 1299ին (Խաղբ. Ա. 185), երբ այս յիշատակարանը դեռ չէին տեսած։

(*) Նմանահանութիւնը Ալիշան, Սիսական, 138։ Միւս յիշատակարանը Սիսակ. 135։ Աւելի մանրամասն Հայապատում 525/6։ Սմբատեան, Երնջակ, 164/5։ Հ. Ակինեան, Հանդէս Ամս., 1915, 64, «Մխիթար Երզնկացի» յօդուածը։